# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 ՓԵՏՐՎԱՐԻ 2020թվականի N 8

## ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 12 ՓԵՏՐՎԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 2 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջով՝ Արենի համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել Արենի համայնքի ավագանու 12-ը փետրվարի 2020 թվականի թիվ 2 հերթական նիստի հետևյալ օրակարգը.

1. Արենի համայնքի ավագանու 12 փետրվարի 2020 թվականի թիվ 2 նիստի օրակարգը հաստատելու մասին,

2. Արենի համայնքի սեփականություն հանդիսացող VAZ 21214 մակնիշի 315LL70 պետհամարանիշի և UAZ 390945-552 մակնիշի 816LL70 պետհամարանիշի ավտոմեքենաների վրա սեղմված բնական գազի համակարգերի տեղադրմանը համաձայնություն տալու մասին,

3. Արենի համայնքի ավագանու 06.12.2019թվականի թիվ 120 որոշման հավելվածում լրացումներ կատարելու մասին,

4. Արենի համայնքի Աղավնաձոր բնակավայրի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 0.19845 հա հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին,

5. Արենի համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերից աճուրդով օտարելուն համաձայնություն տալու մասին,

6. Արենի համայնքի 2020թվականի տարեկան աշխատանքային պլանը հաստատելու մասին,

7. Արենի համայնքի ղեկավարի 2019թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին,

8. Արենի համայնքի 2019թվականի ամենամյա գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին,

9. Արենի համայնքի 2020թվականի տարեկան բյուջեի եկամտային մասը ավելացնելու և ծախսային մասում հոդվածային վերաբաշխումներ կատարելուն համաձայնություն տալու մասին,

10. Արենի համայնքի Խաչիկ բնակավայրում գտնվող 2.2174հա արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողամասը մրցույթով, վարձակալությամբ հատկացնելուն համաձայնություն տալու մասին:

11. Արենի համայնքի Ռինդ բնակավայրի մանկապարտեզի վերակառուցման ժամանակ ապամոնտաժումից գոյացած երկրորդային շինանյութի գները հաստատելու և օտարելու համաձայնություն տալու մասին

12. ՀՀ պետական բյուջեից նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ ստանալու նպատակով 2020 թվականի բյուջետային ֆինանսավորման ծրագրային նախնական հայտերին համաձայնություն տալու և իրականացվելիք ծրագրերի համար նախագծա-նախահաշվային փաստաթղթեր պատվիրելու մասին,

13. Արենի համայնքի Խաչիկ բնակավայրի բնակիչ Վասիլ Աբրահամյանի դիմումը քննարկելու և համայնքապետարանի ենթաբաժանում <<Խաչիկի հացի փուռ>> եռաֆազ էլեկտրական հոսանքի աբոնենտը անհատույց հատկացնելու մասին:

Կողմ-8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄՀԵՐ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՋԱՆԻԿ

ԱՆՏՈՆՅԱՆ ՇԱՀԵՆ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԻՇԽԱՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՍԱՇԻԿ

ՍԻՄՈՆՅԱՆ ԷԴԻԿ

ՍԻՄՈՆՅԱՆ ՄԱՌԼԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՅՈՒՐԻԿ ՄԱՐԱԿՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 ՓԵՏՐՎԱՐԻ 2020թվականի N 9

### ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ VAZ 21214 ՄԱԿՆԻՇԻ 315LL70 ՊԵՏՀԱՄԱՐԱՆԻՇԻ ԵՎ UAZ 390945-552 ՄԱԿՆԻՇԻ 816LL70 ՊԵՏՀԱՄԱՐԱՆԻՇԻ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՎՐԱ ՍԵՂՄՎԱԾ ԲՆԱԿԱՆ ԳԱԶԻ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՏԵՂԱԴՐՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջով՝ Արենի համայնքի ավագանին *որոշում է.*

Տալ համաձայնություն Արենի համայնքի սեփականություն հանդիսացող VAZ 21214-017-58 մակնիշի 315LL70 պետհամարանիշի և UAZ 390945-552 մակնիշի 816LL70 պետհամարանիշի ավտոմեքենաների վրա սեղմված բնական գազի համակարգերի տեղադրմանը:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄՀԵՐ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՋԱՆԻԿ

ԱՆՏՈՆՅԱՆ ՇԱՀԵՆ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ

ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԻՇԽԱՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՍԱՇԻԿ

ՍԻՄՈՆՅԱՆ ԷԴԻԿ

ՍԻՄՈՆՅԱՆ ՄԱՐԼԵՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

# Ո Ր Ո Շ Ու Մ

12 ՓԵՏՐՎԱՐԻ 2020թվականի N 10

## ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 06 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 120 ՈՐՈՇՄԱՆ ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջով՝ Արենի համայնքի ավագանին ***որոշում է՝***

Արենի համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 6-ի «2020 թվականի համար Արենի համայնքի տարածքում տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին» թիվ 120 որոշման հավելվածի 21-րդ կետից հետո ավելացնել նոր կետեր.

22. Արենի համայնքում գործող մանկապարտեզ հաճախող երեխաների համար ծնողական վճար սահմանել մեկ երեխայի համար ամսական 4000 ՀՀ դրամ,

23. Արենի համայնքի Աղավնաձորի արվեստի դպրոց հաճախող երեխաների համար ծնողական վճար սահմանել մեկ երեխայի համար ամսական 3000 ՀՀ դրամ,

24. Կիրառել արտոնություններ.

ա) Մանկապարտեզ և արվեստի դպրոց հաճախող երկկողմանի ծնողազուրկ երեխաներին ազատել վարձավճարից,

բ) Մեկ ընտանիքից արվեստի դպրոց կամ մանկապարտեզ հաճախող երեք և ավելի երեխաների դեպքում, մեկ երեխային ազատել ծնողական վճարից,

գ) Արվեստի դպրոցի երեք խումբ հաճախող երեխաներին ազատել մեկ խմբի վարձավճարից,

դ) Առաջարկել համայնքի ղեկավարին սոցիալական ծանր կացության մեջ հայտնված ընտանիքներին, իրենց դիմումի համաձայն, ազատել տեղական վճարներից հանձնաժողովի ուսումնասիրության և դրական եզրակացության առկայության դեպքում:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄՀԵՐ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՋԱՆԻԿ

ԱՆՏՈՆՅԱՆ ՇԱՀԵՆ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ

ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԻՇԽԱՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՍԱՇԻԿ

ՍԻՄՈՆՅԱՆ ԷԴԻԿ

ՍԻՄՈՆՅԱՆ ՄԱՌԼԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՅՈՒՐԻԿ ՄԱՅԱԿՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 ՓԵՏՐՎԱՐԻ 2020թվականի N 11

### ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԱՎՆԱՁՈՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 0.19854ՀԱ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ և 31-րդ, Հայաստանի Հանրապետության <<Հողային օրենսգրքի>> 3-րդ հոդվածի 1-ին կետերով և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1918-Ն որոշումը, ՀՀ վարչապետի 2001 թվականի օգոստոսի 13-ի թիվ 599 որոշմամբ ստեղծված <<Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի>> 29.01.2020 թվականի թիվ 3 դրական եզրակացությունը, Արենի համայնքի ավագանին *որոշում է*`

ՀՀ Վայոց ձոր մարզի Արենի համայնքի Աղավնաձոր բնակավայրի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում կատարել փոփոխություն. Արենի համայնքի սեփականություն հանդիսացող 0,19854 հա արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության (կադաստրային ծածկագիրը` 10-006-0029-0039) հողամասը փոխադրել բնակավայրերի հողերի կատեգորիա` ընդհանուր օգտագործման գործառնական նշանակության` ֆուտբոլի խաղադաշտ կառուցելու համար:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄՀԵՐ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՋԱՆԻԿ

ԱՆՏՈՆՅԱՆ ՇԱՀԵՆ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ

ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԻՇԽԱՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՍԱՇԻԿ

ՍԻՄՈՆՅԱՆ ԷԴԻԿ

ՍԻՄՈՆՅԱՆ ՄԱՌԼԵՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՅՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 ՓԵՏՐՎԱՐԻ 2020թվականի N 12

## ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՑ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 63-րդ հոդվածի պահանջներով՝ Արենի համայնքի ավագանին *որոշում է*՝

Տալ համաձայնություն համայնքային սեփականության հանդիսացող հողամասերից աճուրդով օտարել.

1. Արենի համայնքի Արենի բնակավայրի վարչական տարածքում գտնվող.

1.1) 0.27174 հա մակերեսով (ծածկագիրը՝ 10-008-0101-0124, գործառնական նշանակությունը՝ վարելահող) գյուղատնտեսական նշանակության հողամասը աճուրդով օտարել: Մեկնարկային գինը սահմանել հողամասի կադաստրային արժեքի 150%-ի չափով՝ 115 150 ՀՀ դրամ,

1.2) 0.0035 հա մակերեսով (ծածկագիրը՝ 10-008-0048-0006, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման, հասցեն՝ գ. Արենի 1-ին փողոց թիվ 39) բնակավայրերի նշանակության հողամասը աճուրդով օտարել: Մեկնարկային գինը սահմանել հողամասի կադաստրային արժեքի 150%-ի չափով՝ 17 955 ՀՀ դրամ,

1.3) 0.00426 հա մակերեսով (ծածկագիրը՝ 10-008-0191-0017, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման, հասցեն՝ գ. Արենի 1-ին փողոց թիվ 41) բնակավայրերի նշանակության հողամասը աճուրդով օտարել: Մեկնարկային գինը սահմանել հողամասի կադաստրային արժեքի 150%-ի չափով՝ 21 854 ՀՀ դրամ,

1.4) 0.17699 հա մակերեսով (ծածկագիրը՝ 10-008-0101-0125, գործառնական նշանակությունը՝ վարելահող) գյուղատնտեսական նշանակության հողամասը աճուրդով օտարել: Մեկնարկային գինը սահմանել հողամասի կադաստրային արժեքի 150%-ի չափով՝ 75 000 ՀՀ դրամ,

1.5) 0.17454 հա մակերեսով (ծածկագիրը՝ 10-008-0126-0002, գործառնական նշանակությունը՝ վարելահող) գյուղատնտեսական նշանակության հողամասը աճուրդով օտարել: Մեկնարկային գինը սահմանել հողամասի կադաստրային արժեքի 150%-ի չափով՝ 413 000 ՀՀ դրամ,

1.6) 0.44351 հա մակերեսով (ծածկագիրը՝ 10-008-0154-0016, գործառնական նշանակությունը՝ վարելահող) գյուղատնտեսական նշանակության հողամասը աճուրդով օտարել: Մեկնարկային գինը սահմանել հողամասի կադաստրային արժեքի 150%-ի չափով՝ 761 730 ՀՀ դրամ,

2. Արենի համայնքի Ելփին բնակավայրի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականության հանդիսացող.

2.1) 0.19628 հա մակերեսով (ծածկագիրը՝ 10-020-0150-0053, գործառնական նշանակությունը՝ վարելահող) գյուղատնտեսական նշանակության հողամասը աճուրդով օտարել: Մեկնարկային գինը սահմանել հողամասի կադաստրային արժեքի 150%-ի չափով՝ 204 622 ՀՀ դրամ,

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՍՀԵՐ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՔԱՆԻԿ

ԱՆՏՈՆՅԱՆ ՇԱՀԵՆ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ

ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ԱՐՇԱԼՈՒՅՍ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԻՇԽԱՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՍԱՇԻԿ

ՍԻՄՈՆՅԱՆ ԷԴԻԿ

ՍԻՄՈՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 ՓԵՏՐՎԱՐԻ 2020թվականի N 13

## ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԸ (ՏԱՊ) ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի պահանջով՝ Արենի համայնքի ավագանին *որոշում է*.

Հաստատել Արենի համայնքի 2020 թվականի տարեկան աշխատանքային պլանը՝ համաձայն սույն որոշման հավելվածի:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄՀԵՐ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ԶԱՆԻԿ

ԱՆՏՈՆՅԱՆ ՇԱՀԵՆ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ

ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԻՇԽԱՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՍԱՇԻԿ

ՍԻՄՈՆՅԱՆ ԷԴԻԿ

ՍԻՄՈՆՅԱՆ ՄԱՌԼԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 ՓԵՏՐՎԱՐԻ 2020թվականի N 14

### ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետի պահանջներով՝ Արենի համայնքի ավագանին ***որոշում է.***

Հաստատել Արենի համայնքի 2019 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը համաձայն հավելվածի՝

ա) մուտքային մասով՝ 352 908 400 ՀՀ դրամ, կամ 102.5%

սեփական մուտքեր՝ 109 309 000 ՀՀ դրամ, կամ 108.6%

բ) ծախսային մասով՝ 493 608 300 ՀՀ դրամ, կամ 96.2%

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄՀԵՐ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՋԱՆԻԿ

ԱՆՏՈՆՅԱՆ ՇԱՀԵՆ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ

ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԻՇԽԱՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՍԱՇԻԿ

ՍԻՄՈՆՅԱՆ ԷԴԻԿ

ՍԻՄՈՆՅԱՆ ՄԱՌԼԵՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

Հավելված 1
12.02.2020թ. Թիվ 14որոշման

| Եկամտային մաս | Հազար դրամ | | |
|---|---|---|---|
| Եկամտատեսակ | Նախատեսված /տարի/ | Կատարողական /տարի/ | Կատարման տոկոս |
| Հողի հարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող հողի համար | 19990.0 | 21444.1 | 107.3 |
| Գույքահարկ | 34131.0 | 40417.9 | 118.4 |
| Տեղական տուրքեր | 3200.0 | 4768.6 | 149.0 |
| ընդամենը գույքի վարձակալությունից եկամուտներ | 15510.0 | 16662.7 | 107.4 |
| Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ | 239910.4 | 239910.4 | 100.0 |
| Պետական բյուջեից համայնքի վարչական բյուջեին տրամադրվող այլ դոտացիաներ | 3689 | 3689 | 100.0 |
| Այլ եկամուտներ/Համայնքի բյուջեի եկամուտներ ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից, Վարչական գանձումներ,օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված՝ համայնքի բյուջե մուտքագրման ենթակա այլ եկամուտներ/ | 27781.478 | 26015.7 | 93.6 |
| Ընդամենը | 344211.9 | 352908.4 | 102.5 |

| Ծախսային մաս | Նախատեսված /տարի/ | Կատարողական /տարի/ | Կատարման տոկոս |
|---|---|---|---|
| Դրամով վճարվող աշխատավարձեր և հավելավճարներ | 108421.5 | 106776.495 | 98.5 |
| Պարգևատրումներ | - | - | - |
| Էներգետիկ ծառայություններ | 12500.0 | 12345.9 | 98.8 |
| Կոմունալ ծառայություններ | 1902.0 | 1902.0 | 100.0 |
| Կապի ծառայություններ | 1600.0 | 1457.9 | 91.1 |
| Գործուղումների և շրջագայությունների ծախսեր | 19.0 | 19.0 | 100.0 |
| Պայմանագրային ծառայությունների ձեռք բերում | 33582.0 | 28778.5 | 85.7 |
| Դրամաշնորհներ | 136750.0 | 132649.7 | 97.0 |
| Սոցիալական նպաստներ և կենսաթոշակներ | 8536.0 | 8514.5 | 99.7 |
| Այլ ծախսեր | 2850.0 | 2212.6 | 77.6 |
| Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում, շինարարություն | 176271.5 | 170555.0 | 96.8 |
| Մեքենաներ և սարքավորումներ, այլ հիմնական միջոցներ | 30438.0 | 28396.7 | 93.3 |
| Ընդամենը | 512870.0 | 493608.3 | 96.2 |

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ԳԵՎՈՐԳ ՍԻՄՈՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

## Ո Ր Ո Շ Ու Մ

12 ՓԵՏՐՎԱՐԻ 2020թվականի N 15

### ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2019ԹՎԱԿԱՆԻ ԱՄԵՆԱՄՅԱ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 32-րդ կետի պահանջներով՝ Արենի համայնքի ավագանին ***որոշում է.***

Հաստատել Արենի համայնքի 2019 թվականի ամենամյա գույքագրման փաստաթղթերը՝ համաձայն սույն որոշման 1-14 հավելվածների:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄՀԵՐ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՋԱՆԻԿ

ԱՆՏՈՆՅԱՆ ՇԱՀԵՆ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ

ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԻՇԽԱՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՍԱՇԻԿ

ՍԻՄՈՆՅԱՆ ԷԴԻԿ

ՍԻՄՈՆՅԱՆ ՄԱՌԼԵՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 ՓԵՏՐՎԱՐԻ 2020թվականի N 16-Ն

## ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՏԱՅԻՆ ՄԱՍՈՒՄ ԱՎԵԼԱՑՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԱՅԻՆ ՄԱՍՈՒՄ ՀՈԴՎԱԾԱՅԻՆ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով, Արենի համայնքի ավագանին ***որոշում է՝***

Տալ համաձայնություն

1. Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի կողմից հատկացված 446 000 ՀՀ դրամը ավելացնել Արենի համայնքի 2020թվականի տարեկան բյուջեի եկամտային մասի՝ Արենի այլ ոչ հարկային եկամուտներ գործառնական դասակարգման 28 բաժնի, 50 խմբի, 00 դասի եկամտատեսակում և նշված գումարը ուղղել.

ա) Սոցիալապես անապահով անձանց աջակցություն գործառնական դասակարգման 10 բաժնի 07 խմբի 01 դասի 4729 (այլ նպաստներ բյուջեից) հոդվածին,

բ) Վերը նշված գումարը վերաբաշխել Արենի համայնքի Արփի բնակավայրում արջից տուժած քաղաքացիներին՝ որպես վնասի փոխհատուցում (կցվում է տուժած քաղաքացիների ցուցակը):

2. Արենի համայնքի 2020թվականի տարեկան բյուջեի վարչական մասի արտադպրոցական դաստիրակություն գործառնական դասակարգման 09 բաժնի 05 խմբի 01 դասի 4637(ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին) հոդվածից պակասեցնել 300 000 ՀՀ դրամ և նշված գումարը ուղղել ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ գործառնական դասակարգման 01 բաժնի 06 խմբի 01 դասի 4657 (այլ կապիտալ դրամաշնորհներ) հոդվածին՝ Ագարակաձոր բնակավայրում Ֆուլլեր տնաշինական կենտրոնի կողմից կառուցված բնակելի տան համաֆինանսավորման նպատակով:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄՅԵՐ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՋԱՆԻԿ

ԱՆՏՈՆՅԱՆ ՇԱՅԵՆ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ

ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԻՇԽԱՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՍԱՇԻԿ

ՍԻՄՈՆՅԱՆ ԷԴԻԿ

ՍԻՄՈՆՅԱՆ ՄԱՈՒԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՅՈՒՐԻԿ ՄԱՐԱԿՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 ՓԵՏՐՎԱՐԻ 2020թվականի N 17

## ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԽԱՉԻԿ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 2.2174ՀԱ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ, ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԱՅԼ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ՄՐՑՈՒՅԹՈՎ, ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 76-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով՝ Արենի համայնքի ավագանին ***որոշում է.***

Տալ համաձայնություն Արենի համայնքի Խաչիկ բնակավայրի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 2.2174 հա (ծածկագիրը՝ 10-025-0106-0010, նպատակային նշանակությունը՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, գործառնական նշանակությունը՝ ընդերքի օգտագործման, հասցեն՝ գ. Խաչիկ Կվարցիտի 1-ին թաղամաս 2 հողամաս) հողամասը 5 տարի ժամկետով մրցույթով վարձակալությամբ հատկացնելու համար: Մեկնարկային գինը սահմանել հողամասի կադաստրային արժեքի 1%-ից ոչ պակաս՝ 5 000 000 (հինգ միլիոն) ՀՀ դրամ:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄՀԵՐ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՋԱՆԻԿ

ԱՆՏՈՆՅԱՆ ՇԱՀԵՆ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ

ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԻՇԽԱՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՍԱՇԻԿ

ՍԻՄՈՆՅԱՆ ԷԴԻԿ

ՍԻՄՈՆՅԱՆ ՄԱՌԼԵՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 ՓԵՏՐՎԱՐԻ 2020թվականի N 18

### ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՌԻՆԴ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԱՊԱՄՈՆՏԱԺՈՒՄԻՑ ԳՈՅԱՑԱԾ ԵՐԿՐՈՐԴԱՅԻՆ ՇԻՆԱՆՅՈՒԹԻ ԳՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջով, Արենի համայնքի ավագանին ***որոշում է՝***

1. Սահմանել Արենի համայնքի Ռինդ բնակավայրի մանկապարտեզի ապամոնտաժումից գոյացած երկրորդային շինանյութի գները (շինարարի կողմից հանձնված վարչական ղեկավարին) կից ցուցակով,
2. Տալ համաձայնություն երկրորդային շինանյութը սահմանված գներով օտարելու համար՝ տալով համապատասխան հայտարարություն:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄՀԵՐ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՋԱՆԻԿ

ԱՆՏՈՆՅԱՆ ՇԱՀԵՆ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ

ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԻՇԽԱՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՍԱՇԻԿ

ՍԻՄՈՆՅԱՆ ԷԴԻԿ

ՍԻՄՈՆՅԱՆ ՄԱՐԼԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

Նախահաշիվ-ծավալաթերթ

Արենի համայնքի Ռինդ բնակավայրում մանկապարտեզի շենքից ապամոնտաժված ցանկապատի և մետաղյա դարպասների

| հ/հ | Աշխատանքների անվանումը | չ/մ | քանակ | Միավորի գինը ( Հազար դրամ) | Ընդհանուր գինը ( Հազար դրամ) |
|---|---|---|---|---|---|
| 1.Մետաղյա ցանկապատ(28 հատ) | | | | | |
| 1 | Պողպատե անկյունակ 40x40x2.5 մմ | գծմ | 6.8 | 0.338 | 2.30 |
| 2. | Պողպատե անկյունակ 30x30x2.5 մմ | գծմ | 3.0 | 0.256 | 0.77 |
| 3. | Պողպատե ցանց, հյուսված ,,Ռաբիցա,, d=1.8 մմ, բջիջը 50x50մմ | մ$^2$ | 4.5 | 0.259 | 1.17 |
| 4. | Մետաղական ցանկապատի պատրաստում (1 բջիջի համար) | տ | 0.0192 | 33.92 | 0.65 |
| | Ընդամենը՝ | | | | 4.89 |
| | Ընդամենը՝ 28 հատի համար | | | | 136.92 |
| 1.Մետաղյա դարպաս (1 հատ) | | | | | |
| 1. | Պողպատե անկյունակ 40x40x4.0 մմ | գծմ | 33.4 | 0.541 | 18.07 |
| 2. | Պողպատե թիթեղ d=3 մմ | մ$^2$ | 4.8 | 5.47 | 26.26 |
| 3. | Մետաղական դարպասների պատրաստում | տ | 0.202 | 84.27 | 17.02 |
| | Ընդամենը՝ | | | | 61.35 |
| | Ընդամենը՝ 1 հատ | | | | 61.35 |

Կազմեց ________ Ս.Սարգսյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 ՓԵՏՐՎԱՐԻ 2020թվականի N 19

### ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐ՝ ՍՈՒԲՎԵՆՑԻԱՆԵՐ ՍՏԱՆԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ 20120 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՅՏԵՐԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱԳԾԱ-ՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ ՊԱՏՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ և 25-րդ կետերի և ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 16-ի N 1708-Ն որոշման պահանջերով, Արենի համայնքի ավագանին *որոշում է.*

1. Տալ համաձայնություն ՀՀ պետական բյուջեից նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ ստանալու նպատակով 2020 թվականի բյուջետային ֆինանսավորման ծրագրային նախնական հայտերին համաձայն սույն որոշման հավելված 1-ի,

2. Սուբվենցիաների ստացման համար գործող կարգով կազմել և ՀՀ Վայոց ձորի մարզպետարան ներկայացնել տնտեսական զարգացման ծրագրերի ֆինանսական հայտերը,

3. Սահմանել, որ ծրագրերի ներկայացման համար համայնքի 2020թվականի բյուջեով նախնական բավարար ֆիանսական միջոցներ են նախատեսված ծրագրերի իրականացման և համայնքային ներդրումներ կատարելու համար:

4. Առաջարկել համայնքի ղեկավարին հավելված 1-ով հաստատված նախնական հայտերի ծրագրերի իրականացման համար պատվիրել նախագծա-նախահաշվային փաստաթղթեր:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄՀԵՐ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՋԱՆԻԿ

ԱՆՏՈՆՅԱՆ ՇԱՀԵՆ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ

ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԻՇԽԱՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՍԱՇԻԿ

ՍԻՄՈՆՅԱՆ ԷԴԻԿ

ՍԻՄՈՆՅԱՆ ՄԱՌԼԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 ՓԵՏՐՎԱՐԻ 2020թվականի N 20

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԽԱՉԻԿ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԲՆԱԿԻՉ ՎԱՍԻԼ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԵՆԹԱԲԱԺԱՆՈՐԴ <<ԽԱՉԻԿԻ ՀԱՑԻ ՓՈՒՌ>> ԵՌԱՖԱԶ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՀՈՍԱՆՔԻ ԱԲՈՆԵՄԵՆՏԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջով, Արենի համայնքի ավագանին *որոշում է*`

Տալ համաձայնություն Արենի համայնքի Խաչիկ բնակավայրի բնակիչ Վասիլ Աբրահամյանի դիմումին և համ այնքապետարանի ենթաբաժանորդ
<<Խաչիկի հացի փուռ>> եռաֆազ էլեկտրական հոսանքի աբոնեմենտը անհատույց հ ատկացնել Վ. Աբրահամյանին:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄՀԵՐ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՋԱՆԻԿ

ԱՆՏՈՆՅԱՆ ՇԱՀԵՆ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ

ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԻՇԽԱՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՍԱՇԻԿ

ՍԻՄՈՆՅԱՆ ԷԴԻԿ

ՍԻՄՈՆՅԱՆ ՄԱՌԼԵՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**